ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**«----» ------------- 2018թ.** **N ------Ն**

## ՈՐՈՇՈՒՄ

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 93-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և 76-րդ հոդվածի 2-րդ մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով.

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի մասին» N 93-Ն որոշմամբ հաստատված.

1) եկամուտների գումարն ավելացնել 3,000.0 հազար դրամով,

2) ծախսերի գումարը նվազեցնել 200,000.0 հազար դրամով,

3) դեֆիցիտի (պակասուրդի) գումարը նվազեցնել 203,000.0 հազար դրամով:

2. Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի մասին» N 93-Ն որոշմամբ հաստատված NN 1-7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1-7 հավելվածների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 93-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի N 93-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվում է Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեում իրականացնել հետևյալ փոփոխությունները.

- Հաշվի առնելով Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 23-ի N 21-Ա որոշումը՝ Երևան քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի շրջանակներում անցկացվելու են վիճակագրական հարցումներ, որի տվյալները ծառայելու են Երևան քաղաքի 10 վարչական շրջանների կառավարող մարմինների և քաղաքապետարանի կողմից էներգաապահովման բնագավառում մատուցվող ծառայությունների մասով բնակիչների ընկալումը վերլուծելու համար: Հարցման արդյունքներն օգտագործվելու են ջերմոցային գազերի արտանետումները կրճատելու և կլիմայի փոփոխության հարմարվողականությունը խթանելու նպատակով համապատասխան քաղաքականությունը և միջոցառումները նախանշելու համար, դրանում ներառելով որակի վերահսկման միջոցառումները, ինչպես նաև հասարակական կարծիքի ազդեցության և պետական մասնավոր համագործակցության ներուժի օգտագործման հնարավորությունը: Նախնական գնահատման համաձայն՝ հարցման ընդհանուր հաշվարկային արժեքը կազմում է մոտ 12,000.0 հազար դրամ, որից համայնքի կողմից համաֆինանսավորման գումարի չափը՝ 3,000.0 հազար դրամ, իսկ Միավորված Ազգերի Զարգացման Ծրագրի «Քաղաքային կանաչ լուսավորություն» ՄԱԶԾ-ԳԷՖ/00074860 ծրագրով ֆինանսավորման չափը՝ 9,000.0 հազար դրամ:
- «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի բնականոն և անվտանգ աշխատանքն ապահովելու համար անհրաժեշտ պահեստամասերի, անվադողերի և այլ նյութերի ձեռքբերմանն աջակցելու նպատակով նախագծով առաջարկվում է «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի ձեռքբերման միջոցով իրականացնել 203,000.0 հազար դրամի ներդրում:
- Նախագծով առաջարկվում է «Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում» ծրագիրն ավելացնել 55,000.0 հազար դրամով՝ Մաշտոցի պողոտա-Գրիգոր Լուսավորիչ տրանսպորտային հանգույցի թունելային հատվածի հիմնանորգման և պատշաճ տեսքն ապահովելու համար:
- Նախագծով առաջարկվում է օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտների մասում նախատեսել 3,000.0 հազար դրամի չափով մուտքերի ավելացում, որը նպատակային կուղղվի սոցիալապես անապահով անձանց աջակցության ծրագրին:

Հիմք ընդունելով նշված փոփոխությունները և վերաբաշխումները՝ բյուջեի վարչական և ֆոնդային մասերը հավասարակշռելու նպատակով նախագծով առաջարկվում է վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումն ավելացնել 101,141.2 հազար դրամով:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի N 93-Ն որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ N 1

## «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 93-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի N 93-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ N 2

# «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 93-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի N 93-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման արդյունքում Երևանի քաղաքի 2018 թվականի բյուջեի եկամուտները ավելացել են 3,000.0 հազար դրամով, ծախսերը նվազում են 200,000.0 հազար դրամով, դեֆիցիտը նվազում է 203.000.0 հազար դրամով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված N  1
Երևան քաղաքի ավագանու
2018 թվականի __________________-ի
N ___________ – Ն որոշման

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 93-Ն ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Եկամտատեսակները | Հոդվածի NN | Ընդամենը | այդ թվում (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| **1000** | **ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ** | | **3,000.0** | **3,000.0** | **101,141.2** |
| | այդ թվում` | | | | |
| **1300** | **3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ** | **7400** | **3,000.0** | **3,000.0** | **101,141.2** |
| | այդ թվում` | | | | |
| **1390** | **3.9 Այլ եկամուտներ** | **7451** | **3,000.0** | **3,000.0** | **101,141.2** |
| | այդ թվում` | | | | |
| 1392 | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | | - | - | 101,141.2 |
| 1393 | Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված` համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ | | 3,000.0 | 3,000.0 | |

Հավելված N  2
Երևան քաղաքի ավագանու
2018 թվականի ___________________-ի
N ____________ – Ն որոշման

# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 93-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը | այդ թվում (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | **(200,000.0)** | **3,000.0** | **(101,858.8)** |
| 2400 | **04** | **0** | **0** | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | **55,000.0** | **-** | **55,000.0** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2450 | **04** | **5** | **0** | ***Տրանսպորտ*** | **55,000.0** | **-** | **55,000.0** |
| | | | | որից՝ | | | |
| 2451 | 04 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | 55,000.0 | - | 55,000.0 |
| 2500 | **05** | **0** | **0** | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | **3,000.0** | **3,000.0** | **-** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2560 | **05** | **6** | **0** | ***Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)*** | **3,000.0** | **3,000.0** | **-** |
| | | | | որից՝ | | | |
| 2561 | 05 | 6 | 1 | Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) | 3,000.0 | 3,000.0 | - |
| 3000 | **10** | **0** | **0** | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | **3,000.0** | **3,000.0** | **-** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 3070 | **10** | **7** | **0** | ***Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)*** | **3,000.0** | **3,000.0** | **-** |
| | | | | որից՝ | | | |
| 3071 | 10 | 7 | 1 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) | 3,000.0 | 3,000.0 | - |
| 3100 | **11** | **0** | **0** | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ | **(261,000.0)** | **(3,000.0)** | **(156,858.8)** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 3110 | 11 | 1 | 0 | ***ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ*** | **(261,000.0)** | **(3,000.0)** | **(156,858.8)** |
| | | | | որից՝ | | | |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | (261,000.0) | (3,000.0) | (156,858.8) |

Հավելված N 3
Երևան քաղաքի ավագանու
2018 թվականի ___________________-ի
N ____________ – Ն որոշման

# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 93-Ն ՈՐՈՇՄԱՆ N 3 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Ընդամենը | այդ թվում (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 4000 | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** | | **(200,000.0)** | **3,000.0** | **(101,858.8)** |
| | այդ թվում՝ | | | | |
| 4050 | Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ[a] | x | **(255,000.0)** | **3,000.0** | **(156,858.8)** |
| | այդ թվում՝ | | | | |
| 4500 | **1.5 ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ** | x | **6,000.0** | **6,000.0** | **-** |
| | այդ թվում՝ | | | | |
| 4530 | *ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅԼ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻՆ* | x | 6,000.0 | 6,000.0 | - |
| | որից՝ | | | | |
| 4533 | - Այլ ընթացիկ դրամաշնորհներ | 4639 | 6,000.0 | 6,000.0 | - |
| 4700 | *1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ* | x | **(261,000.0)** | **(3,000.0)** | **(156,858.8)** |
| | այդ թվում՝ | | | | |
| | որից՝ | | | | |
| 4770 | *ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ* | x | **(261,000.0)** | **(3,000.0)** | **(156,858.8)** |
| | որից՝ | | | | |
| 4771 | **-Պահուստային միջոցներ** | 4891 | (261,000.0) | (104,141.2) | (156,858.8) |
| 4772 | այդ թվում՝ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ | x | - | 101,141.2 | - |
| 5000 | **Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ** | x | **55,000.0** | **-** | **55,000.0** |
| | այդ թվում՝ | | | | |
| 5100 | **1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ** | x | **55,000.0** | **-** | **55,000.0** |
| | այդ թվում՝ | | | | |
| 5110 | *ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ* | x | 55,000.0 | - | 55,000.0 |
| | որից՝ | | | | |
| 5113 | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 55,000.0 | **-** | 55,000.0 |

Հավելված N 4
Երևան քաղաքի ավագանու
2018 թվականի ___________________-ի
N ___________ – Ն որոշման

# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 93-Ն ՈՐՈՇՄԱՆ N 4 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | | Ընդամենը | այդ թվում (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|
| | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 8000 | ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՎԵԼՈՒՐԴԸ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴԸ) | 203,000.0 | - | 203,000.0 |

Հավելված N 5
Երևան քաղաքի ավագանու
2018 թվականի ___________________-ի
N ____________ – Ն որոշման

# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 93-Ն ՈՐՈՇՄԱՆ N 5 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Ընդամենը | *այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)* | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 8010 | ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | **(203,000.0)** | **-** | **(203,000.0)** |
| | այդ թվում՝ | | | | |
| 8100 | Ա. ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | | (203,000.0) | - | (203,000.0) |
| | այդ թվում՝ | | | | |
| 8160 | *2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ* | | (203,000.0) | - | (203,000.0) |
| | այդ թվում՝ | | | | |
| **8161** | **2.1. Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն** | | (203,000.0) | - | (203,000.0) |
| | որից՝ | | | | |
| 8164 | *- բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում* | 6213 | (203,000.0) | - | (203,000.0) |

Հավելված N 6
Երևան քաղաքի ավագանու
2018 թվականի ____________________-ի
N ____________ – Ն որոշման

# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 93-Ն ՈՐՈՇՄԱՆ N 6 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը | այդ թվում (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** | | **(200,000.0)** | **3,000.0** | **(101,858.8)** |
| **2400** | **04** | **0** | **0** | **ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | **55,000.0** | **-** | **55,000.0** |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| **2450** | **04** | **5** | **0** | ***Տրանսպորտ*** | | **55,000.0** | **-** | **55,000.0** |
| | | | | որից՝ | | | | |
| 2451 | 04 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | | 55,000.0 | - | 55,000.0 |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | ***8. Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում*** | | ***55,000.0*** | ***-*** | ***55,000.0*** |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 55,000.0 | - | 55,000.0 |
| **2500** | **05** | **0** | **0** | **ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ** | | **3,000.0** | **3,000.0** | **-** |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| **2560** | **05** | **6** | **0** | ***Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)*** | | **3,000.0** | **3,000.0** | **-** |
| | | | | որից՝ | | | | |
| 2561 | 05 | 6 | 1 | Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) | | 3,000.0 | 3,000.0 | - |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | ***6. Երևան քաղաքի «Կանաչ քաղաք գործողությունների ծրագրի» միջոցառումների իրականացում*** | | ***3,000.0*** | ***3,000.0*** | |
| | | | | - Այլ ընթացիկ դրամաշնորհներ | 4639 | 3,000.0 | 3,000.0 | |
| **3000** | **10** | **0** | **0** | **ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ** | | **3,000.0** | **3,000.0** | **-** |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| **3070** | **10** | **7** | **0** | ***Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)*** | | **3,000.0** | **3,000.0** | **-** |
| | | | | որից՝ | | - | - | - |
| 3071 | 10 | 7 | 1 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) | | 3,000.0 | 3,000.0 | - |
| | | | | այդ թվում՝ | | - | - | - |
| | | | | ***4. Սոցիալապես անապահով անձանց աջակցություն*** | | ***3,000.0*** | ***3,000.0*** | ***-*** |
| | | | | - Այլ ընթացիկ դրամաշնորհներ | 4639 | 3,000.0 | 3,000.0 | - |
| **3100** | **11** | **0** | **0** | **ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ** | | **(261,000.0)** | **(3,000.0)** | **(156,858.8)** |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| **3110** | **11** | **1** | **0** | ***ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ*** | | **(261,000.0)** | **(3,000.0)** | **(156,858.8)** |
| | | | | որից՝ | | | | |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | | (261,000.0) | (3,000.0) | (156,858.8) |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | –Պահուստային միջոցներ | 4891 | (261,000.0) | (104,141.2) | (156,858.8) |
| | | | | –Հատկացում պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե | x | - | 101,141.2 | - |

Հավելված N 7
Երևան քաղաքի ավագանու
2018 թվականի _______________________-ի
N ___________ – Ն որոշման
*Աղյուսակ N 1*

# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 93-Ն ՈՐՈՇՄԱՆ N 7 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը | այդ թվում (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | | **(203,000.0)** | **-** | **(101,858.8)** |
| 2400 | **04** | **0** | **0** | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | **55,000.0** | **-** | **55,000.0** |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 2450 | **04** | **5** | **0** | ***Տրանսպորտ*** | | **55,000.0** | **-** | **55,000.0** |
| | | | | որից՝ | | | | |
| 2451 | 04 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | | 55,000.0 | - | 55,000.0 |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | ***8. Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում*** | | ***55,000.0*** | **-** | ***55,000.0*** |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 55,000.0 | | 55,000.0 |
| 2500 | **05** | **0** | **0** | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | | **3,000.0** | **3,000.0** | **-** |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 2560 | **05** | **6** | **0** | *Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)* | | **3,000.0** | **3,000.0** | **-** |
| | | | | որից՝ | | | | |
| 2561 | 05 | 6 | 1 | Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) | | 3,000.0 | 3,000.0 | - |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | ***6. Երևան քաղաքի « Կանաչ քաղաք գործողությունների ծրագրի» միջոցառումների իրականացում*** | | | ***3,000.0*** | |
| | | | | - Այլ ընթացիկ դրամաշնորհներ | 4639 | | 3,000.0 | |
| 3100 | **11** | **0** | **0** | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ | | **(261,000.0)** | **(3,000.0)** | **(156,858.8)** |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 3110 | **11** | **1** | **0** | *ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ* | | **(261,000.0)** | **(3,000.0)** | **(156,858.8)** |
| | | | | որից՝ | | | | |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | | (261,000.0) | (3,000.0) | (156,858.8) |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | –Պահուստային միջոցներ | 4891 | (261,000.0) | (104,141.2) | (156,858.8) |
| | | | | –Հատկացում պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե | x | - | 101,141.2 | - |

**Հավելված N 7**
**Երևան քաղաքի ավագանու**
**2018 թվականի _________________________-ի**
**N ___________ – Ն որոշման**
*Աղյուսակ N 2*

# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 93-Ն ՈՐՈՇՄԱՆ N 7 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 8 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | | **3,000.0** | **3,000.0** | **-** |
| 3000 | **10** | **0** | **0** | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | | **3,000.0** | **3,000.0** | **-** |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 3070 | **10** | **7** | **0** | ***Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)*** | | **3,000.0** | **3,000.0** | **-** |
| | | | | որից՝ | | | | |
| 3071 | 10 | 7 | 1 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) | | 3,000.0 | 3,000.0 | - |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | ***4. Սոցիալապես անապահով անձանց աջակցություն*** | | ***3,000.0*** | ***3,000.0*** | **-** |
| | | | | - Այլ ընթացիկ դրամաշնորհներ | 4639 | 3,000.0 | 3,000.0 | |